

Հոսմ.—Միգրատիոյ հաղորդում են, որ թիշամին աշխատում էր գրաւել իտալական կարաւանները, բայց յետ մտղից կորցնելով 100 հոգի, իտալացիներէրից սպանված է մէկը և վերաւորված է 10 հոգի:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԵՆ

Հայ ազգաբնակից 400-ամեակը

4. Պոլիս, 8 օգոստոս
Հակառակ այն բուն ոգևորութեան, որ կողկաւասայք ցոյց կուտան տօնելու համար հայ տպագրութեան 400-ամեակը, 4. Պոլսոյ հայութիւնը կը մնայ մեռելութեան և անշարժութեան մէջ:

Ակիւտարի թաղախն ընկերութիւններէն մէկը նախաձեռնութիւնը ունեցած էր միւս իրեն նման ընկերութիւններն հրաւիրելու և անոնց խորհրդակցութեամբ մշակելու ծրագիր մը:

Այս ընկերութիւններուն ներկայացուցիչներէն բաղկացած մարմինը՝ իբր գործադիր՝ ընտրած էր յանձնաժողով մը, որուն նախանշում կարգուած էր նաև Լեոն Լարենց, և ասիակ արդէն բաւական էր վիժեցնելու համար գործը:

Արդէն ասկէ առաջ «Մշակի» խմբագրութիւնը նախարարարար յայտնած էր, թէ այս տեսակ ոճրագործի մը այդքան նուիրական գործի մը գլուխ կանգնելը որքան անհամապատասխան էր ազգային զգացումներուն:

Լեոն Լարենցի անունն իսկ բաւական եղաւ այս գործը վիժեցնելու և... արդէն ինքնին մեռաւ... առանց աղմուկի:

Վերջին անգամ ընդհ. ժողովին հրահանգէր և ոչ իսկ մէկ հոգի չէր պատասխանած:

Այնպէս որ՝ այս փորձը չեղեալ կրնայ համարուիլ:

Ուսումն, խորհուրդն ալ իր կողմէն փորձեց կազմակերպել հանդէս մը ի պատիւ 400-ամեակի և յանձնարարեց, որ իզմիրեան յանձնաժողովը ստանձնէ այս գործը, սակայն անիկա մերժեց:

Հիմա, ուսումն, խորհուրդը, յուսանալով թիւրքահայերէն, իր ուշադրութիւնը դէպի Կովկաս դարձուցած է և իր կողմէն Ստ. Մալխասեանցը և Յովհ. Յովհաննիսեանը ներկայացուցիչ կարգած է իշխմանայ մէջ կատարելիք հանդէսներուն:

Միացեալն ալ, անոր օրինակին հետեւելով, որոշած է իր կողմէն ներկայացուցիչ կարգել՝ պ. պ. Ալ. Քալանթար, Հ. Առաքելեան, Ա. Սարգսեան, բժ. Շիսեան, Յ. Սպէնգիարեան, իսկ թիւրքահայոց մէջ նոր շարժում մը առաջ բերելու համար՝ ուսումն. խորհուրդը որոշած է նոր յանձնաժողով մը կարգել լրագրաց և Միացեալի, Հայունեացի, Դպրոցատէրի, Բարեգործականի ներկայացուցիչներէն բաղկացած:

Այս յանձնաժողովի կազմութիւնը և իրական արդիւնք մը առաջ բերելը մեզի շատ տարակուսելի կերևայ, և կրնանք հիմակուել յայտնել մեր թիւրքահայութեան նըս Այնպէս որ նոյնմեքերին՝ Թարգմանչաց ասոնի օրը՝ իշխմանայ մէջ թերևս այս փաստաւոր տօնը տօնուած ատեն՝ թիւրքահայոց մէջ ամօթալի անտարբերութեամբ մը ոչինչ պիտի սպբուած ըլլայ, իբր հանրային և հրապարակային արտայայտութիւն:

Քաղաքակրթական ձեռնարկներու նկատմամբ թիւրքահայոց այս աղէտալի անտարբերութիւնը մասամբ արդիւնք է երկրին վիճակին, որ շարունակ շիջուցեցնում է մէջ է, և նոյնքան ալ թիւրքահայ լրագրութեան ստացած ուղղութեան:

Հասարակութեան մէջ եռանդ ու ոգևորութիւն առաջ բերելու համար լրագրութիւնը պէտք էր ոյժ տար գաղափարին, մինչ թիւրքահայ լրագրի, հարիւր անգամ աւելի հետաքրքիր Ձինաստանի անցուղաբանութեան, բնաւ չի շահագրգռուիլ հայ կեանքին ներքին դրուագներով և անոր քաղաքակրթական շարժման երևոյթներով:

Ասոր համար թիւրքահայ լրագրութիւնը զբեթէ ոչինչ բնաւ մինչև հիմա հայ տպագրութեան 400-ամեակին առթիւ՝ ժողովուրդին մէջ եռանդ և ոգևորութիւն արժեքներ համար, և միայն քանի մը իրողութիւններ արձանագրելով բաւականացաւ:

Հայ լրագրութիւնը թիւրքահայոց մէջ կապուած ըլլալով անհատական կամ կուսակցական շահերու՝ չունի այն հանրային առաջնորդող շնորհը, որ մենք կը տեսնենք յաճախ կողկաւասայք մամուլին մէջ, ուր գաղափարական տարրն աւելի տեղ գրաւած է:

Այս պայմաններու մէջ՝ կերևայ թէ հասարական ձեռնարկ մը բնաւ չպիտի ըլլայ թիւրքահայոց մէջ, ուր արդէն գաղափարներու շուրջը համախմբուելի անտոյր երեւոյթ մըն է, մինչ պայքարող, քանդիչ գործունէութիւն մը ցոյց տալ շատ սովորական:

Թիւրքահայ ամբողջութեան այս անտարբեր վերաբերումը օակայն անհատներ կը գրմանեն:

Տէր-Ներսէսեան տպարանը նախաձեռնարկ կ'ընէ է հայ տպագրութեան 400-ամեակին առթիւ հրատարակելու գեղարուեստական անձնան գործ մը, որ կը պատրաստէ «Ամենակն Տարեցոյցը» շահեկան օրացոյցներուն շնորհակալ՝ Թէոդիկ Այս գործը պատմութիւնը պիտի ըլլայ 400 տարուան մէջ իրարու յանդիմանող բոլոր տպարաններուն և պիտի պարունակէ կենսագրութիւնները և

պատկերները բոլոր հայ տպագրիչներուն: Ամեն տպարաններէ լոյս տեսնող գրքերուն նմանատպութիւնները պիտի հրեան հատորին մէջ, որ պիտի տպագրուած ըլլայ խիստ ընտիր թուղթի վրայ և երկգոյն ու խնամակալ տպագրութեամբ:

Այս գործը, իբր գնահատելի աշխատութեան մը արդիւնք թիւրքահայոց մասնակցութեան միակ արտայայտութիւնը պիտի ըլլայ, և կը կարծենք, թէ պատուաբեր պիտի ըլլայ զայն պատրաստողներուն համար ալ, թիւրքահայոց համար ալ:

«Տաճար» կրօնաթերթին ասկէ մէկ երկու շաբաթ առաջ ծանուցած էր, թէ ուրիշ թիւրքահայ գրող մըն ալ, որուն անունը չէր տրուած, կը պատրաստէ ուրիշ գործ մը հայ տպագրութեան պատմութեան վրայ, սակայն այս լուրը մեզի անհաստատի կը թուի, զի մինչև հիմա չէ յայտնուած այս գործը պատրաստողին անունը:

Մեր հարցասիրութիւնը անօգուտ եղաւ և չկրցանք հասկնալ, թէ ո՞վ է այս գործին հեղինակը և ի՞նչ է պատրաստուածը:

Ի վերջոյ տեղեկացանք, թէ այս գրողը առաջ եկած է պարզապէս լատինացիներու ատենագրութեան տակ գտնուած յանձնաժողովին մշակած մէկ ծրագրէն, որով կուշոււ կըլլար կարգ մը գործներու՝ հայ տպագրութեան պատմութեան վերաբերելի հատուածներ տալ, անոնցմով կազմելու համար ժողովածու մը:

Սակայն այդ յանձնաժողովն իր մահկանացուն կնքած ըլլալով, բնական է, թէ այս ծրագիրն ալ մեռած է: Շառալլ

ՆՆՈՒԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՆՆԵՐ

Բնակարանային հարցը

Ահաւասիկ ճիշդ որ մի մեծ, անիծված հարց՝ կենտրոններում ապրողների համար:

Տարիներ առաջ մենք «Մշակի» էջերում խօսել ենք այս հարցի առիթով, և անհուրից ստիպուած ենք կանգ առնել այս հրատապ խնդրի վրայ:

Բնակարանների թանգանալը կենտրոններում մենք շատ բնական ենք համարում և իբրև հետևանք կենսաբիւլ բնա պահանջների մինչ մի կողմից ազգաբնակչութիւնը շատանում է բնական աճումով, միւս կողմից նաև աւելանում է գաւառներից եկող տարբերով, և շատ զգալի չափերով, անա այս բոլոր բազմութիւնը պէտք է մի կերպ տեղաւորվի բնակարաններում, և խնդիրն այն է, որ այդ բնակչութեան մեծ մասը ձգուած է ապրել քաղաքի կենտրոնամասերում: Քաղաքի կենտրոնամասերը միշտ բնված են լինում վարձողներով, ուստի և մէկը միւսից խլիլու համար յաճախ գնեք բարձրացնում են, այնուհետև դուրս քշվածները աշխատում են գտնել կենտրոնամասերից մօտիկ մասում ապրել և փոխադարձաբար նոյն ձևին են դիմում՝ ինչ իրանց հետ վարձողները, այսինքն քրէնները աւելացնում և համեմատաբար խղճ դասակարգին աւելի քաղաքի ծայրերը շրջում. և այդպէս՝ թանգանալից ալիքը սկսվելով՝ կենտրոնից քշվում է տարածվելով դէպի քաղաքի ամեն մասերը:

Իսկ տնատէրերին ինչ է հարկաւոր. հէնց մի այսպիսի դրութիւն, և անա նրանք էլ, տեսնելով իրանց ապրանքի մեծ պահանջ, աւելի ևս թանգանում են բնակարանների վարձը, և այս բոլոր տեսարանը մասնաւոր օգոստոս ամսին ինչնցնում է կատարելապէս ձիարշաւները. տնատէրերը հեծած բնակարաններ վարձողների վրա՝ աշխատում են միմեանցից առաջ ընկնել գնեք թանգանցներու մէջ և հարա եղածին չափ դատարկել բնակարան վարձողների գրպանները:

Թիֆլիսում վերջին երկու տասնեակ տարիներում բնակարանների վարձը աւելացել են 200—300 տոկոսով, այսինքն գնեք կրկնակի, եռակի աւելացել են:

Տնատէրերը քղեքներում, երբ ուզում էին գնեք աւելացնել, գտնէ ծածկվում էին թղկնու տերներով՝ պատճառաբանելով աւելացնելը գանազան հարկերի աւելանալով, դանպասների պարտաւորեցուցիչ դատարարով ծախսերի աւելանալը. սակայն այժմ այդ անմեղ թղկնու տերները ևս մի կողմ շարտիլով՝ ցինիկաբար պահանջում են սոսկալի գնեք, ուղղակի պատճառաբանելով որ իրանց հարևանը աւելացրել գնեք, հետևապէս և իրանք էլ պիտի գնեք աւելացնեն:

Մենք կենք ուզում բողոքած լինել տնատէրերի անյազոքող արտոյթների դէմ. դա կը լինէր աւելորդ ժամավաճառութիւն. տնատէրը, երբ տեսնի թէ իր բնակարանները երկար դատարկ են մնալու, ինքը ուրախութեամբ կը պակասեցնի գինը և ամեն յարմարութիւն կը տայ վարձողներին, որպէսզի վարձեն այդպիսիք:

Ուրեմն խնդրի իսկական շարքը անա մէջն է, որ բնակարանների մեծ պահանջ կայ և եղածները չեն բաւականանում:

Այսպիսով, եթէ կամենում ենք այս անիծված հարցին բաւարար լուծումն տալ, նախ և առաջ պիտի հնարներ մտածենք բնակարանները աւելացնելու մասին:

Հէնց առաջին միտքը, որ իրարքանչիւր մտածող ունենում է այս խնդրի մասին, բնակարանաբար նա է, թէ քաղաքում եղած տները և տեղերը շահագործել՝ աւելացնելով քաղաքի յարկեր շինութիւնների վրա.